

Հաստատված է
«ՀԱՅԵԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Վարչության
«16» «Նոյեմբերի» 2022թ

Թիվ 222/04-16.11.2022 որոշմամբ
Վարչության նախագահ

_____ Ա. Խաչատրյան

Ուժի մեջ է մտնում 21.11.2022թ.-ից
Յրապարակման ամսաթիվը «18» «Նոյեմբերի» 2022թ.

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել,
մանրամասների համար https://aeb.am/hy/individuals_beneficial/
Յեռախոս - (37410)8686, (37410)51-09-10 (9104) - Բանկի տեղեկատու



ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
<< ՇԱՀԱՎԵՏ >> ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆՂԻ

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ

1. Անվանումը - «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՅ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե - Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1

Էլեկտրոնային հասցե - bank@acb.am

Կայք - www.acb.am

Հեռախոս - (37410)8686, (37410)510-910 (9104)

Ֆաքս - (37410)53-89-04

2. Ավանդը ֆիզիկական անձ հաճախորդներից բանկը ներգրավում է ներքնշյալ պայմաններով՝

ԺԱՄԿԵՏ 367 օր					
Արժույթ	Նվազագույն գումար	Առավելագույն ընդհանուր գումար	Տոկոսագումարի վճարում	Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
ՀՀ ԴՐԱՄ	100,000	50 մլն	ամսական	8.3%	8.62%
			եռամսյակային	8.4%	8.67%
			Ժամկետի վերջում	8.5%	8.5%
ԱՄՆ ԴՈՒԼԱՐ	200	100,000	ամսական	3.60%	3.60%
			եռամսյակային	3.65%	3.69%
			Ժամկետի վերջում	3.80%	3.80%
ԵՎՐՈ	200	100,000	ամսական	1.85%	1.85%
			եռամսյակային	1.90%	1.91%
			Ժամկետի վերջում	2.00%	2.00%

- տարին ընդունելով 365 օր, նահանջ տարվա համար 366 օր

2.1

ՎՍԱՐԱԺԱՄԿԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՎՈՂ ԱՎԱՆՈՒ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ					
Արժույթ	Տոկոսագումարի վճարում	Ավանդի վաղաժամկետ վերադարձի ժամանակահատվածը			
		31-ից - 90 օր	91-ից - 182 օր	183 ից - 274 օր	275 ից - 366 օր
ՀՀ դրամ	ամսական	4.50%	5.50%	6.25%	7.00%
	եռամսյակային	4.50%	5.60%	6.35%	7.10%
	Ժամկետի վերջում	4.75%	5.75%	6.75%	7.50%
ԱՄՆ դոլար	ամսական	0.40%	1.40%	2.30%	3.00%
	եռամսյակային	0.40%	1.45%	2.35%	3.05%
	Ժամկետի վերջում	0.50%	1.50%	2.50%	3.20%
ԵՎՐՈ	ամսական	-	0.2%	0.6%	1.0%
	եռամսյակային	-	0.2%	0.7%	1.1%
	Ժամկետի վերջում	-	0.2%	0.8%	1.3%

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Ավանդի ներգրավման ծառայություն բանկի <<Ռոսիա-1>> և <<Արարատյան>> մասնաճյուղերը չեն մատուցում:

Ավանդը կարող է ներդրվել նաև AEB Online կամ AEB Mobile հեռակառավարման համակարգերով (սպասարկման պայմանների ու կարգի մանրամասները ներկայացված են <<Online Banking>>/<<Mobile Banking>> համակարգերի տեղեկատվական ամփոփագրում):

Ելնելով ավանդի ծավալից «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ավանդատուներին նվիրում է անվճար պլաստիկ քարտ՝ ա/ ArCa classic տեսակի քարտ ցանկացած ծավալի դեպքում:

ք/ 300 000 ՀՀ դրամ և համարժեք արտարժույթից բարձր՝ Master Card standard, Master Card Gold, VISA classic, VISA Gold տեսակի պլաստիկ քարտեր:

*ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, Եվրոյով ավանդների տոկոսագումարի ամսական վճարմամբ ավանդների տարեկան

ԱՅԷԿՈՆՈՄԱՆԿ

տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով՝ ելնելով հետևյալ բանաձևից՝

$$APY = (1 + r / n)^n - 1$$

որտեղ՝

- 1) APY – տարեկան տոկոսային եկամտաբերությունն է:
- 2) r – տարեկան պարզ տոկոսադրույքն է:
- 3) n – մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է:

**ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, Եվրոյով, Ռ-Ռ ռուբլով ավանդների տոկոսագումարի վճարումը ժամկետի վերջում ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+APY)^{365 D_n}}$$

որտեղ՝

- 1) A - ավանդի սկզբնական գումարն է:
- 2) n - ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համարն է:
- 3) N - ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարն է (ներառյալ նաև ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետը համարվում է ավարտված:
- 4) K_n - ավանդի ներդրման պահին և/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի և/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում պարտադիր վճարների հոսքեր:
- 5) D_n – այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչև ավանդի դիմաց կատարվող հերթական n-րդ դրամական հոսքերը ներառյալ: Այն դեպքում, երբ ավանդի ներդրման պահին է դրամական հոսքերը, D₁ = 0:
- 6) Ավանդի ժամկետի համար հիմք է ընդունվում ներգրավման ժամկետի յուրաքանչյուր միջակայքի առավելագույն արժեքը:

«ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԵ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄՆՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱՐԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՅՈՒՅՅ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆՂԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՐՏԱԴՐ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՍԵ ՎԱՍՏԱԿԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱՐԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ www.acb.am »:

3. Շահավետ ավանդի տեսակը՝ ժամկետային:
4. Հաշվեգրված տոկոսագումարը չի կապիտալացվում և վճարվում է ավանդատուին ամսական, եռամսյակային պարբերականությամբ կամ ժամկետի վերջում:
5. Տոկոսագումարը հաշվարկվում է ներդրված ավանդի գումարի մնացորդի վրա:
6. Ավանդի տոկոսները հաշվարկվում են Ավանդը Բանկում ընդունվելու օրվանից մինչև Ավանդատուին վերադարձվելու նախորդ օրը:
7. Ավանդային պայմանագրով սահմանված տոկոսադրույքը և վաղաժամկետ վերադարձվող ավանդի վերահաշվարկի տոկոսադրույքը չի կարող միակողման նվազեցվել պայմանագրում նշված Ավանդի վերադարձման ժամկետում:
8. Ավանդը կամ դրա մի մասը վաղաժամկետ պահանջելու դեպքում՝ սույն ամփոփագրի 2-րդ կետով սահմանված տոկոսագումարի փոխարեն Ավանդի կամ այդ մասի դիմաց հաշվարկվում և վճարվում է տոկոսագումար սույն ամփոփագրի 2.1 կետով սահմանված վաղաժամկետ վերադարձվող Ավանդի վերահաշվարկվող տոկոսադրույքի չափով: Եթե արդեն վճարվել սույն ամփոփագրի 2-րդ կետով սահմանված սահմանված տոկոսագումարը, ապա վերահաշվարկվող տոկոսադրույքի չափից ավելի հաշվարկված և Ավանդատուին վճարված տոկոսագումարի չափով Ավանդը համարվում է վերադարձված:
9. Եթե Ավանդը կամ դրա մի մասը պահանջվել են երկարաձգված ժամկետում, ապա Ավանդի կամ այդ մասի դիմաց երկարաձգումից հետո հաշվարկվում և վճարվում է տոկոսագումար՝ երկարաձգման պահին տվյալ ավանդատեսակի վաղաժամկետ վերադարձման համար Բանկում գործող պայմաններով:
10. Ավանդատուն կարող է ավելացնել Ավանդին լրացուցիչ գումարներ ՀՀ դրամի դեպքում Ավանդի վերադարձման (երկարաձգված) ժամկետին նախորդող մինչև 91-րդ օրը, արտարժույթի դեպքում՝ 181-րդ օրը և ներդրման

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ

(երկարաձգման) պահին Ավանդի առավելագույն ընդհանուր գումարի չափից ոչ ավելի գումարով, որի դիմաց հաշվարկվում է տոկոսագումար՝ Ավանդի դիմաց հաշվարկվող տոկոսադրույքի չափով և պայմաններով:

11. Ավանդի ավելացումից հետո ավանդի կամ դրա մասի վաղաժամկետ վերադարձի պահանջի դեպքում՝ ըստ առաջնահերթության վերադարձվում են մինչև ավելացումը ներդրված գումարները, այնուհետև ավելացված գումարները: Վաղաժամկետ վերադարձվող ավանդի կամ դրա մասի դիմաց վերահաշվարկվող տոկոսադրույքը հաշվարկվում է համապատասխան գումարը ներդնելու(ավելացնելու) օրվանից մինչև դրա վաղաժամկետ վերադարձվելու նախորդ օրը փաստացի օրացույցային օրերի համար, իսկ վերահաշվարկվող տոկոսադրույքի չափից ավելի վճարված տոկոսագումարի չափով Ավանդը համարվում է վերադարձված:
12. Ավանդի վերադարձման ժամկետը լրանալու օրը Ավանդը չպահանջվելու դեպքում (եթե Ավանդի վերադարձման այլ ժամկետ չի սահմանվել Կողմերի համաձայնությամբ)՝ Ավանդատուի համաձայնությամբ Ավանդի վերադարձման ժամկետը կարող է ինքնաբերաբար երկարաձգվել նախորդ ժամկետով (շարունակաբար, բայց ոչ ավել երեք անգամից) և Ավանդի դիմաց հաշվարկվեն տոկոսներ տվյալ ավանդատեսակի համար երկարաձգման օրվա դրությամբ Բանկի սահմանած տոկոսների չափով: Եթե տվյալ ավանդատեսակի գործողությունը Բանկի կողմից դադարեցվել է, ապա Ավանդի վերադարձման ժամկետը ինքնաբերաբար չի երկարաձգվում և մինչև Ավանդի փաստացի պահանջվելը Ավանդի դիմաց հաշվարկվում են տոկոսներ Բանկում գործող բանկային հաշիվներին առկա դրամական միջոցների համար Բանկի սահմանած տոկոսների չափով:
13. Եթե Ավանդի վերադարձման ժամկետը լրանալուց Ավանդը չի պահանջվել և Ավանդի վերադարձման ժամկետը չի երկարաձգվել, ապա մինչև Ավանդի փաստացի պահանջվելը Ավանդի դիմաց հաշվարկվում են տոկոսներ Բանկում գործող բանկային հաշիվներին առկա դրամական միջոցների համար Բանկի սահմանած տոկոսների չափով:
14. Բանկն ավանդային պայմանագրում նշված պարբերականությամբ, որը չպետք է գերազանցի մեկ ամիսը, ներդրողին (ավանդատուին) տրամադրում է իր ավանդային հաշվի վերաբերյալ քաղվածք ավանդային պայմանագրում կամ ավանդատուի դիմումով նշված եղանակով, բացառությամբ այն դեպքի, երբ հաշվետու ժամանակաշրջանում տվյալ հաշիվը չի դեբետագրվել կամ կրեդիտագրվել, բացի այդ ավանդատուի կողմից պահանջ ներկայացնելու դեպքում 5-օրյա ժամկետում տրամադրել հաշվի քաղվածք բանկի հայտարարած Սակագներով:

ՀԱՇՎԱՐԿԻ ՕՐԻՆԱԿ

Տոկոսագումարի վճարում՝ ամսական			
Արժույթ	ՀՀ ԴՐԱՄ	ԱՄՆ Դոլար	ԵՎՐՈ
Ժամկետ	367 օր		
Տոկոսադրույք	8.3%	3.60 %	1.85 %
Ներդրված գումար	5,000,000	10,000	10,000
Մտացվելիք տոկոսագումար	375,546	326	167
ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿ			
Խզման ժամկետ	185 օր		
Տոկոսադրույք	6.25%	2.3%	0.6%
Վերահաշվարկված տոկոսագումար	142,551	105	27

Տոկոսագումարի վճարում՝ եռամսյակային			
Արժույթ	ՀՀ ԴՐԱՄ	ԱՄՆ Դոլար	ԵՎՐՈ
Ժամկետ	367 օր		
Տոկոսադրույք	8.4%	3.65 %	1.9%
Ներդրված գումար	5,000,000	10,000	10,000
Մտացվելիք տոկոսագումար	380,071	330	172
ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿ			
Խզման ժամկետ	185 օր		
Տոկոսադրույք	6.75%	2.5%	0.75%
Վերահաշվարկված տոկոսագումար	144,832	107	32

Տոկոսագումարի վճարում՝ ժամկետի վերջում			
Արժույթ	ՀՀ ԴՐԱՄ	ԱՄՆ Դոլար	ԵՎՐՈ
Ժամկետ	367 օր		
Տոկոսադրույք	8.5%	3.8 %	2%
Ներդրված գումար	5,000,000	10,000	10,000
Ստացվելիք տոկոսագումար	384,596	344	181
ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿ			
Խզման ժամկետ	185 օր		
Տոկոսադրույք	6.75%	2.5%	0.75%
Վերահաշվարկված տոկոսագումար	153,955	114	36

* - ավանդատուի ցանկության դեպքում արտարժույթով արտահայտված տոկոսագումարը վճարվում է ՀՀ դրամով՝ տոկոսների վճարման օրվան նախորդող օրը ՀՀ արժույթային շուկայում ձևավորված արտարժույթի միջին փոխարժեքով

- Հաշվարկներում տարին ընդունվել է 365 օր, ընդ որում տոկոսագումարը հաշվարկված է հաշվի առած եկամտային հարկը:

15. Երրորդ անձանց կողմից ավանդը չի կարող համալրվել:

15.1 Այլ անձանց կողմից ավանդատուի ավանդը օգտագործելու կամ տնօրինելու լիազորությունները ընդունվում են, եթե լիազորությունը տրվել է նոտարով վավերացված լիազորագրով կամ բանկում անձամբ ավանդատուի կողմից՝ բանկի աշխատակցի ներկայությամբ և հաստատումով ձևակերպված և ստորագրված՝ գրավոր լիազորագրով:

16. Պայմանագրից բխող վեճերի առաջացման դեպքում ավանդատուն գրավոր դիմում է բանկին և 10 աշխատանքային օրվա ընթացքում ավանդատուին տրվում է դիմումի վերաբերյալ պատասխան: Պատասխանի հետ համաձայն չլինելու դեպքում ավանդատուն իրավունք ունի դիմել դատարան կամ ֆինանսական համակարգի հաշտարարին օրենքով սահմանված կարգով:

17. Վճարվող տոկոսագումարը ենթակա է հարկման ՀՀ «Հարկային օրենսգրքի» 7-րդ բաժնի դրույթներով:

18. Ավանդը ներդրվում է 367 օր ժամկետով:

19. Ավանդները երաշխավորվում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն.

- միայն ՀՀ դրամով բանկային ավանդների դեպքում երաշխավորված ավանդի չափը տասնվեց միլիոն հայկական դրամ է,
- միայն արտարժույթային բանկային ավանդների դեպքում երաշխավորված ավանդի չափը յոթ միլիոն հայկական դրամ է,
- ՀՀ դրամով և արտարժույթով բանկային ավանդների դեպքում, եթե դրամային բանկային ավանդը մեծ է յոթ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է միայն դրամային բանկային ավանդը՝ մինչև տասնվեց միլիոն հայկական դրամով,
- ՀՀ դրամով և արտարժույթով բանկային ավանդների դեպքում, եթե դրամային բանկային ավանդը պակաս է յոթ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային բանկային ավանդը՝ յոթ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

20. Ֆինանսական կազմակերպությունը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին (նման պահանջի առկայության դեպքում)

21. Ֆինանսական կազմակերպությունների կողմից կնքված պայմանագրերի, համաձայնագրերի, համագործակցությունների, կամ անդամակցությունների վերաբերյալ, որոնք ուղղակի ազդեցություն կարող են ունենալ սպառողների վրա (օրինակ՝ «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն ֆինանսական կազմակերպությունը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում»)

22. «ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱԴԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՍ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՅՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍՆԵԼԻ Է 24/7 ՌԵՇԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆՈՒԹՅՈՒՆ»

ԴԱՅԵԿՈՆՈՄԲԱՆԿ

23. «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՅՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է» «Ձեր ֆինանսական տեղեկատուն»՝ www.fininfo.am

24. Ավանդատուի կողմից ավանդը ներդնելու համար պահանջվում է՝

- Անձը հաստատող փաստաթուղթ
- Հանրային ծառայությունների համարանիշը պարունակող փաստաթուղթը (ՀՀ քաղաքացիների համար)
- Ելնելով տարաբնույթ հանգամանքներից կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն: